

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 26.11.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից, 35-ը
(երեսունհինգը),

Նիստին մասնակցում էին՝

- | | | |
|-----|------------------------|---|
| 1. | Մերոբյան
Երվանդ | Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ |
| 2. | Ավետիսյան
Նազելի | Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի
պրոռեկտոր-տնօրենի ՊԿ |
| 3. | Մելքոնյան
Հովիկ | Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ
կապերի կենտրոնի տնօրեն |
| 4. | Սարգսյան
Արմենուհի | Գիտական քաղաքականության, որակի ապահովման
ու կառավարման կենտրոնի տնօրեն |
| 5. | Խաչատրյան
Թերեզա | Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների,
նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն |
| 6. | Պետրոսյան
Կարինե | Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար) |
| 7. | Մելիքյան
Թամարա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան |
| 8. | Հովհաննիսյան
Օֆելյա | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան |
| 9. | Սարգոյան
Ռուզաննա | Մանկավարժության ֆակուլտետի դեկան |
| 10. | Մկրտչյան
Արթուր | Ռազմական ամբիոնի պետ |
| 11. | Այվազյան
Կարինե | ՇՊՀ քոլեջի տնօրեն |
| 12. | Դարբինյան
Կարեն | ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն |
| 13. | Խաչատրյան
Վալերի | ՇՊՀ արհմիության նախագահ |

14.	Սողոյան Սպարտակ	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենաերիտասարդ դոկտոր)
15.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր)
16.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
17.	Մարտիրոսյան Լևոն	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
18.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
19.	Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
20.	Ադանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
21.	Խորիկյան Հովհաննես	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
22.	Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
23.	Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
24.	Հայրապետյան Սերգո	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
25.	Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
26.	Տեր-Ադամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
27.	Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
28.	Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

- | | | |
|------------|--------------------------|---|
| 29. | Հովհաննիսյան
Յուլյանա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա
մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի |
| 30. | Վիրաբյան Ալլա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց
լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |
| 31. | Ամիրխանյան
Անուշ | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական
գործ՝ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 32. | Քոչարյան
Անահիտ | Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն
և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |
| 33. | Աթոյան
Արտյոմ | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի
պատմության մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող |
| 34. | Հովհաննիսյան
Հռիփսիմե | Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա
մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |
| 35. | Սարգսյան
Սվետլանա | Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն
մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի |

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-2020 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման մասին

Հաղ.՝ գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ռազմական ամբիոնի օրինակելի կանոնադրության» հաստատման մասին (նոր խմբագրությամբ)

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ֆակուլտետի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի» հաստատման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

4. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի» հաստատման մասին (լրամշակված)

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

5. Հաղորդում 2019--2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

6. ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Արվեստի» ամբիոնի դասախոս արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Հաղ.՝՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

7. ՇՊՀ «Գիտական տեղեկագրում» խմբագրական խորհրդի փոփոխության մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

8. Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի ձևավորման և հաստատման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

9. Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և շնորհավորական խոսք ուղղեց գիտական խորհրդի նոր ձևավորված կազմին՝ հույս հայտնելով, որ այսուհետև ևս գիտական խորհրդին առնչվող աշխատանքներն համալսարանում առավել արդյունավետ կկազմակերպեն:

Պարոն Սերոբյանը նշեց, որ գիտական խորհրդի օրակարգային հարցերին և դրանց առնչվող փաստաթղթերին գիտական խորհրդի անդամները ծանոթ են, քանի որ էլեկտրոնային նամակով հասանելի են եղել բոլորին և և քվեարկության դրեց նիստի օրակարգն ու դրան առնչվող առաջարկությունները (Ա. Սարգսյանի կողմից առաջարկվել էր 6-րդ հարցը (ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Արվեստի» ամբիոնի դասախոս արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին) տեղափոխել առաջ, որպես 1-ին հարց)):

ՔՎԵԱԿԱԶՄԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նիստի օրակարգը հաստատելուց հետո.

1. **ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Արվեստի» ամբիոնի դասախոս արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին**

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

2. **2019-2020 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման մասին**

Հաղ.՝ գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան

3. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ռազմական ամբիոնի օրինակելի կանոնադրության» հաստատման մասին (նոր խմբագրությամբ)**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

4. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ֆակուլտետի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի» հաստատման մասին**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

5. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի» հաստատման մասին (լրամշակված)**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

6. Հաղորդում 2019-2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝Ն. Ավետիսյան

7. ՇՊՀ «Գիտական տեղեկագրում» խմբագրական խորհրդի փոփոխության մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

8. Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի ձևավորման և հաստատման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

9. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Արվեստի» ամբիոնի դասախոս արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին:

Պարոն Ա. Մկրտչյանը հարց բարձրացրեց, որ հավակնորդը համալսարանում աշխատում է ժամավճարային հիմունքներով և ինչ՞ու իր հիմնական աշխատավայրում չի դիմել դոցենտի կոչում ստանալու համար, ապա շարունակեց, որ այսօր տենդենց կա ամբիոնի դոցենտների սահմանափակում կատարելու և իր կարծիքով, հիմնական աշխատողին կոնգուրենտ կստեղծվի:

Պարոն Ս. Սարգսյանը հարցը շարունակելով, նշեց. քանի որ հավակնորդի հիմնական աշխատավայրը Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղն է, հարկ է, որ հիմնական աշխատանքի վայրից նա հայտ ներկայացնի գիտական կոչում ստանալու համար:

Ա. Սարգսյանը պատասխանեց, որ «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու» կարգի «Դոցենտի գիտական կոչում շնորհելը»-բ դրույթում ամրագրված պահանջները մեկը այն է, որ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձը գիտական կոչում շնորհող բուհում պետք է ունենա գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ: Հասմիկ Հարությունյանը Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում աշխատել է բազմաթիվ տարիներ, սակայն վերջին 2 տարում չի աշխատել այնտեղ և միայն վերականգնվել է իր հիմնական աշխատանքին մեկ տարի առաջ (նույնիսկ նշվեցին հիմնական աշխատավայրից աշխատանքից ազատվելու և նորից վերականգնվելու պատճառները՝ պայմանավորված քաղաքական իրավիճակի վերջին փոփոխությունների հետ (վերջիններս նշվեցին արվեստի ամբիոնի վարիչ Օֆ. Կուրազյանի և գիտական քարտուղար Կ. Պետրոսյանի կողմից)):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ս. Հայրապետյանը, որի կարծիքով Հասմիկ Հարությունյանին մեր բուհի կողմից դոցենտի կոչում շնորհելը և նրա բուհում դասավանդելը պատիվ պետք է համարել, քանի որ նա հանրապետության լավագույն երաժշտեսաբաններից է:

Արվեստի ամբիոնի վարիչ ՕՖ. Կուրազյանը, որը նշեց, որ Հասմիկ Հարությունյանը հանրապետության լավագույն Կոմիտասագետներից է և ունի 55 գիտական աշխատանքներ:

ՕՖ. Կուրազյանի առաջին մտքի հետ չհամաձայնեց Ս. Սարգսյանը, հակադարձելով, թե ի՞նչ է նշանակում լավագույն Կոմիտասագետ և գոնե պետք է ասել, որ նա արժանի է:

Ա. Մկրտչյանը նորից արտահայտվեց, նշելով, թե մեր հիմնական աշխատողին փաստորեն քաղիրավական պայմանագրով բուհում պարզևավճար չի հատկացնում, բայց քաղիրավական պայմանագրով աշխատողին դոցենտի գիտական կոչում ենք ուզում շնորհել:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ աշխատողին պարզևավճար հատկացնելու հարցը բուհի ներքին խնդիրն է և իր կարծիքով անալոգը տեղին չէ, հիմնական հարցից պետք չէ շեղվել և վերջապես իրենք իրավունք չունեն չքննարկելու հավակնորդի դոցենտության հարցը:

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը ավելացրեց, որ Հասմիկ Հարությունյանի ներկայացրած գործը քննարկվել է բուհի համապատասխան հանձնաժողովում, քանի որ հավակնորդը ժամավճարային աշխատող է, ժամերի քանակի հետ առնչվող հարցերը մեկ անգամ ևս ճշտվել են ԲՈԿ-ի համապատասխան մասնագետների կողմից, և հավաստիանալով, որ այն համապատասխանում է դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին՝ ներկայացվել է գիտական խորհրդին՝ հաստատման նպատակով, այլ հարց է թե ինչպիսի՞ որոշում կկայացվի գիտական խորհրդի կողմից:

Պարոն Սերոբյանը առաջարկ ստացավ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1(Ս. Սարգսյան):

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Հասմիկ Հայկի Հարությունյան	Արվեստի ամբիոնի դասախոս	ԺԷ.00.02 – «Արվեստագիտություն»

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացված փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Սպարտակ Սողոյան, Գևորգ Ադանյան և ուսանողներից ինքնառաջադրվեց Յուլյանա Հովհաննիսյանը:

Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս. Սողոյանը ներկայացրեց հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հասմիկ Հայկի Հարությունյան	29	6	0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով, որ Հասմիկ Հայկի Հարությունյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 35-ը, կողմ՝ 29, դեմ՝ 6, անվավեր՝ 0) Հասմիկ Հայկի Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ժԷ.00.02 – «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման մասին

Աշխատանքային պլանը վաղօրոք ներկայացվել էր գիտական խորհրդի անդամներին, դիտարկումներ չեն ստացվել, սակայն պարոն Սերոբյանը առաջարկեց այսուհետ գիտական խորհրդի ընթացիկ հարցերին անդրադառնալիս 5-10 րոպե հատկացնել բուհի գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին՝ ամենամյա հաղորդումներ կատարելու համալսարանում հավատարմագրման գործընթացի հետ կապված աշխատանքների մասին և գիտական խորհրդի անդամներն էլ գիտենան, թե ինչ դինամիկայով են գնում և իրենք էլ իրեց հերթին աջակցեն այս աշխատանքների կատարմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Վ. Խաչատրյանին հետաքրքրում էր, թե արդյո՞ք գիտական խորհրդում ներկայացված օրակարգային իրավական փաստաթղթերը քննարկվել են համալսարանում ստեղծված իրավական ակտերի մշակման, բարելավման հարցերը կարգավորող հանձնաժողովների կողմից:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ այո՛, հանձնաժողովի կողմից քննարկվել է, տրվել եզրակացություն, հետո ներկայացրել գիտական խորհուրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2019-2020 ուստարվա նոյեմբեր-հունիս ամիսների ՇՊՀ-ի գիտական խորհրդի աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0 (քվեարկությանը չեն մասնակցել Ա. Սարգսյանը և Կ. Այվազյանը՝ հարգելի պատճառով):

3. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ռազմական ամբիոնի օրինակելի կանոնադրության» հաստատման մասին (նոր խմբագրությամբ)

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ կանոնադրությունը հեռահար կապի միջոցով նույնպես ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին, դիտարկումներ չեն ստացվել և եթե հարցեր ունեն կարող են ուղղել հարցը հաղորդողին՝ ռազմական ամբիոնի պետ գնդապետ Ա. Մկրտչյանին:

Թ. Խաչատրյանին հետաքրքրում էր, թե հանձնաժողովի եզրակացությունը կա՞ այս փաստաթղթի տեղ կապված:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ ոչ մի դիտողություն և առաջարկություն չի եղել և ավելացրեց, որ մանրամասն կանոնադրությունը նայվել է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ռազմական ամբիոնի օրինակելի կանոնադրության» հաստատման մասին (նոր խմբագրությամբ):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի ֆակուլտետի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի» հաստատման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ նախապես աշխատանքային տարբերակ էր ուղարկվել գիտական խորհրդի անդամներին և բազմաթիվ առաջարկություններ են կատարվել նրանց կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Տիկին Մարդոյանին հետաքրքրում էր, թե ներկայացված առաջարկները արդյո՞ք հաշվի առվել են:

Պարոն Սերոբյանը նշեց, որ մի շարք առաջարկներ հաշվի են առվել, նշեց պարոն Խորիկյանի կողմից կատարած որոշ առաջարկները ժամկետների հետ կապված, իսկ որոշ առաջարկներ նույնիսկ ընդունելու դեպքում էլ փոփոխել կանոնադրության կետերը հնարավոր չի եղել, քանի որ դրանք թելադրված են բուհի կանոնադրությամբ: Դրանցից մեկը վերաբերում է ամբիոնի վարիչի ընտրությանը ներկայացվող պահանջներին, այդ իսկ պատճառով պարոն Սերոբյանը կարդաց ՇՊՀ կանոնադրության 110-րդ կետը. նշելով, որ բուհում ընդունված ցանկացած իրավական ակտ պետք է համապատասխանի կանոնադրությանը: Նա նշեց, որ երբ հարցը քննարկվում էր հոգաբարձուների խորհրդի նիստում, ինքը դեմ է արտահայտվել

այս ձևակերպմանը, պահանջել, որ ամբիոնի վարիչի ընտրության դեպքում պահանջներից պետք է լինի նաև գիտական կոչումը:

Պարոն սերոբյանը ասաց, որ երբ բուհի կանոնադրության վրա աշխատող հանձնաժողովը ընդունում էր առաջարկներն ու դիտողությունները, ցավոք, խորհրդի անդամների կողմից այս հարցի հետ կապված առաջարկներ չեն ներկայացվել:

Վ. Խաչատրյանը, ով ներկայացրեց, որ ինքը հանձնաժողովի անդամ է եղել և երբ քննարկում էին այս հարցը իրենց կողմից այն առաջարկվել է, սակայն չի ընդունվել:

Հայրապետյանն առաջարկեց, որ հարկ է հիմա ձևակերպել և պահանջը գիտական աստիճան կամ կոչումով ներկայացնել:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ գիտական խորհուրդը ոչ մի տառ չի կարող ավելացնել կանոնադրության մեջ:

Ա. Մկրտչյանն առաջարկեց, որ դիմեն հոգաբարձուների խորհրդին, որպեսզի ամբիոնի վարիչի պահանջների մեջ կանոնադրությունում կատարեն փոփոխություն և

բացի աստիճանից նաև կոչում ավելացնեն՝ անպայման մասնագիտական առանձնահատկությունները հաշվի առնելով:

Սերոբյանը նշեց, որ կարող են դիմել հոգաբարձուների խորհրդին և սպասել, թե նրանք արդյո՞ք կհամաձայնեն փոփոխել այս հարցը, հետո էլ պետք է սպասեն, որ այն պետքեզիստորով հաստատվի:

Ս. Սարգսյանին հետաքրքրում էր, թե կա՞ որևէ բուհ ՀՀ-ում, որ մեր կանոնադրությանը նման կանոնադրություն ունի և ավելացրեց, որ իրենց ամեն ինչը յուրահատուկ է:

Սերոբյանը պատասխանեց, որ կարելի է ասել սրա նախահայրը կարծեմ ԵՊՀ-ի հինքն է:

Հայրապետյանը չհամաձայնեց այս մտքի հետ, ասելով, որ իրենց կանոնադրությունը ոչ մեկին էլ նման չէ: Այնուհետև պարոն Հայրապետյանը շարունակեց, որ կանոնադրության 110-րդ կետում նշված համապատասխան բառի փոխարեն պետք է լինի ամբիոնի բնույթին համապատասխան և բացի դրանից, իր կարծիքով, որոշ կետեր իրար ժխտում են օրինակ բերելով 2.8-ի երկրորդ մասը, որը չի համապատասխանում 5,3 կետին:

Սերոբյանը չհամաձայնեց, նշելով որ սա կառուցվածքային փոփոխության հետ կապված հարց է:

Պարոն Մելքոնյանը բացատրեց, որ այո՛, կառուցվածքային է, որպեսզի ամբիոնի անունը փոփոխելիս երկու անգամից ավել ժամկետում անձը ամբիոնի վարիչ չընտրվի:

Ա. Հովհաննիսյանն առաջարկեց չընդունել և չհաստատել կանոնադրությունը, դիտարկումների հետ կապված ձևակերպումները կատարելուց հետո այն ներկայացնել հոգաբարձուների խորհրդին և նրա կարծիքով, ընդհանրապես, բուհում կանոնադրության կետերը մշակելիս քան թե ներքևից հարցերին մոտենան, հակառակը դրանք վերևից են կատարվում:

Սերոբյանը չհամաձայնեց ասելով, որ հանձնաժողովը ամբիոններից ժամանակին պահանջել է դիտողություններ, առաջարկություններ, սակայն չեն ստացել:

Ա. Հովհաննիսյանը պատասխանեց, որ ասվել է, սակայն հոգաբարձուների կողմից դրանք չեն ընդունվել:

Մ. Սարգսյանը առաջարկեց աշխատանքային խումբ ստեղծել և արագ ձևակերպել գիտական խորհրդում քննարկված առաջարկությունները, այնուհետև դրանք ներկայացնել հոգաբարձուների խորհրդին հաստատման:

Պարոն Սերոբյանը առաջարկեց տալ աշխատանքային խմբի թեկնածուների անուններ:

Մ. Սարգսյանը առաջարկեց Ս. Հայրապետյանին, Վ. Խաչատրյանը առաջարկեց Ա. Մկրտչյանին, Մարդոյանը առաջարկեց Ա. Հովհաննիսյանին, Ս Սարգսյանը առաջարկեց Ռ. Մարդոյանին :

Պարոն Սերոբյանը ամփոփելով ներկայացրեց աշխատանքային խումբը և նշեց, որ հստակ ժամկետներ պետք է տալ նրանց հարցի ուղղությամբ աշխատելու համար, քանի որ ժամանակային առումով պետք է արագ կարգավորվի հարցը, որպեսզի աշխատանքային պլանի հետ խնդիրներ չառաջանան, հատկապես, որ հունվար- փետրվար ամիսներին ամբիոնի վարիչների ընտրության հայտերը պետք է ներկայացնել:

Տիկին Մելիքյանի կարծիքով հոգաբարձուների խորհուրդը նման հարցերով չի զբաղվում և դրա համար էլ հանձնաժողովը հստակ թող ձևակերպի և ներկայացնի հոգաբարձուների խորհրդին:

Պարոն Սերոբյանի կողմից հանձնարարվեց աշխատանքային խմբի անդամներին դիտարկումները հստակ ձևակերպվել և ներկայացնել մինչև ուրբաթ օրը ժամը երեքը, այն ուղարկել գիտական քարտուղարին, նրա կողմից էլ գիտական խորհրդի նախագահին: Երկուշաբթի օրը հանձնախմբի հետ ժամը տասներկուսին հանդիպել, շտկումներ կատարել և եթե անհրաժեշտություն լինի հաջորդ օրը գիտական խորհուրդ հրավիրել, այն հաստատել , որպեսզի ներկայացվի հոգաբարձուների խորհրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. չհաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ֆակուլտետի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգը:

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի վարիչի ընտրության կանոնակարգի 2.8 կետի վերաբերյալ գիտական խորհրդի անդամների կողմից կատարված դիտարկումների արդյունքում առաջարկվող փոփոխությունը հստակ ձևակերպելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Մ. Հայրապետյան՝ ք.գ.դ

Ա. Հովհաննիսյան՝ ք.գ.դ., պրոֆեսոր

Ռ. Մարդոյան՝ մ.գ.դ., պրոֆեսոր

Ա. Մկրտչյան՝ տ.գ.թ., դոցենտ

3. 2.8 կետի վերոգրյալ փոփոխությունը ներկայացնել հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

5. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ աստեստավորման ընթացակարգի» հաստատման մասին (լրամշակված)

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել ընթացակարգում, մասնավորապես.

6-րդ կետի 12-րդ ենթակետը.

նախկինը.

Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» (90 և բարձր միավոր) գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր իրենց ուսումնառության ընթացքում ապահովել են 90 և ավելի միջին որակական գնահատական (ՄՈԳ):

Փոփոխված և լրամշակված տարբերակն է.

Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» (86 և ավելի միավոր) գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր իրենց ուսումնառության ընթացքում ապահովել են 90 և ավելի միջին որակական գնահատական (ՄՈԳ):

Տիկին Ավետիսյանի կողմից ներկայացվեց նաև լրամշակված 6.17 և 6.18 կետերը.

6.17- Պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած ուսանողը հաջորդ տարի ատեստավորվելու նպատակով կարող է դիմում ներկայացնել ռեկտորի անունով ոչ ուշ քան հաջորդ տարվա ապրիլի 1-ը ներառյալ՝ եթե տեղի չի ունենում ՄԹ թեմայի փոփոխություն՝ հիմք ընդունելով ամբիոնի համապատասխան հիմնավորումը թեմայի արդիականության վերաբերյալ: Վերջինս պարտավոր է համալսարանին վճարել տվյալ տարվա ուսումնական պլանով նախատեսված կրեդիտներին՝ համապատասխան վճար, ըստ համալսարանի կողմից սահմանված վճարի չափի՝ նախապաշտպանության և պաշտպանության կազմակերպման նպատակով, կամ համալսարանի կողմից ամրագրված վճարի չափի:

6.18- Պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած ուսանողը հաջորդ տարի ատեստավորվելու նպատակով կարող է դիմում ներկայացնել ռեկտորի անունով ոչ ուշ քան հաջորդ տարվա ապրիլի 1-ը ներառյալ՝ եթե տեղի չի ունենում ՄԹ թեմայի փոփոխություն՝ հիմք ընդունելով ամբիոնի համապատասխան հիմնավորումը թեմայի արդիականության վերաբերյալ: Վերջինս պարտավոր է համալսարանին վճարել տվյալ տարվա ուսումնական պլանով նախատեսված կրեդիտներին՝ համապատասխան վճար, ըստ համալսարանի կողմից սահմանված վճարի չափի՝ նախապաշտպանության և պաշտպանության կազմակերպման նպատակով, կամ համալսարանի կողմից ամրագրված վճարի չափի:

Այնուհետև տիկին Ավետիսյանի կողմից ներկայացվեցին նաև ընթացակարգում տեղ գտած մասնավոր փոփոխությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թ. Խաչատրյանին հետաքրքրում էր, թե համապատասխան հանձնախմբերը արդյոք այս կարգերի համար եզրակացություններ տրվել են և արդյո՞ք նրանց կողմից արված գրավոր եզրակացությունները առկա են:

Պարոն Սերոբյանը նշեց, որ պարոն Ներսիսյանի ղեկավարած հանձնաժողովի կողմից միայն ստուգվել են համապատասխանությունները տվյալ փաստաթղթերի իրավական դաշտին, իսկ բովանդակային առումով աշխատանքները կատարվել են

մյուս երկու հանձնախմբերի կողմից, որոնք ղեկավարում են պարոն Ս. Սարգսյանն ու պարոն Հ. Մելքոնյանը:

Տիկին Ավետիսյանն ավելացրեց, որ ընթացակարգը հիմնված է եղել նախարարության կողմից իջեցված կարգի հիման վրա, կարգի վրա աշխատել են երկու հանձնախմբեր, մի խումբն աշխատել է բակալավրի կրթական ծրագրի վրա, մյուսը մագիստրոսի, և քանի որ գործածության ընթացքում առաջացել են մասնավոր առանձին խնդիրներ, որոնք ուսումնական մասը նկատել է, ապա առաջարկություն են եղել իր կողմից քննարկել որոշ խնդիրներ ամբիոններում և այնուհետև ներկայացնել գիտական խորհրդում, դրանք 6. 12 և 6. 17 կետերն էին, որոնք արդեն իսկ ներկայացվել են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչատեստավորման ընթացակարգը»:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

6. ԼՍԵՑԻՆ՝

Հաղորդում 2019-2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին խոսելիս իր կողմից շեշտադրումը պետք է կատարվի հատկապես այն մասնագիտություններին, որոնցից շատ դիմորդներ են ունեցել և հակառակը դիմորդները սակավաթիվ են եղել կամ ընդհանրապես չեն եղել: Տիկին Ավետիսյանը նշեց, որ հետագայում. երբ հայտերը ներկայացնելու ժամանակը գա ցանկացած ստորաբաժանում սկսած մասնագիտական ամբիոնից, կամ դեկանատից, որի զեկուցումների հիման վրա իրենք ներկայացնում են հայտը նախարարություն, հարկ է, որ ուշադրություն դարձնեն այս կարևոր փաստին: Այնուհետև տիկին Ավետիսյանը ներկայացրեց ընդունելության արդյունքները թվերով (տես կցված աղյուսակի տվյալները): Ներկայացվեց. որ յոթ մասնագիտությունների գծով պետպատվերի տեղերը բուհը չի իրացրել:

Տիկին Ավետիսյանի կարծիքով սերվիս և զբոսաշրջություն մասնագիտությունները մոտ են և դիմորդների քանակ չի ապահովվում: Տիկին Ավետիսյանի կարծիքով այս հարցի շուրջ բուհը լուրջ վերլուծության կարիք ունի և հետագա ռազմավարական զարգացման համար պետք է ունենալ հինգ տարվա կտրվածքով տարիների վերլուծությունը այն ներկայացնել գիտական խորհրդին մինչև հայտերի ներկայացնելը նախարարություն, կառավարության հաստատմանը և մինչև մասնագիտությունների ցանկի հաստատումը: Այս համատեքստում Ավետիսյանը ներկայացրեց կուրսերում մեկից ութ և ինն և ավելին ուսանողների քանակը և նշեց, որ այն կազմում է տասներեք- տասներեք հարաբերակցություն, ամենաշատ դիմորդներ են ունեցել սոցիոլոգիա, հոգեբանություն, թարգմանչական գործ, տարրական

մանկավարժություն և մեթոդիկա, ֆիզիկական դաստիարակություն և նգա մասնագիտություններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ա. Մկրտչյանը, ով նշեց, որ այստեղ լուրջ խնդիր կա և խնդիրը այն է, որ եթե նախկինում պահանջարկն էր ծնում առաջարկ, այսօր այն փոխվել է և առաջարկն է ծնում պահանջարկ, այսինքն, մենք ինչ որ առաջարկում ենք, դրան համապատասխան պետք է շուկայում պահանջարկ ձևավորենք, ոչ թե շուկան ինչ պահանջարկ ունի; Եթե այս առումով մենք խնդիր ունենք, ապա ոչ թե մեր ամբիոններն են վատ աշխատել, այլ մենք շատ վատ գովազդ ենք տարել, որի արդյունքում ցածր ընդունելություն ենք ունեցել:

Տիկին Ավետիսյանն ավելացրեց, որ ինքը համաձայն է, որ մասնագիտական կողմնորոշման գովազդը մասնագիտական ամբիոնի կարևոր խնդիրներից մեկն է:

Պարոն Մկրտչյանը շարունակեց, որ բուհը վատ մարկետինգ է արել:

Տիկին Ավետիսյանը հակադարձեց պարոն Մկրտչյանին, որ այստեղ գնահատական չի հնչել:

Պարոն Մերոբյանի կարծիքով գնահատական չի հնչել, ուղղակի տիկին Ավետիսյանն ընդամենը փաստել է, և իր կարծիքով, սա բազմակոմպոնենտ գործընթաց է և զուտ ամեն ինչում մի գործոնի վրա ուշադրություն դարձնելը սխալ է, ընդհանրապես եթե արդյունք պետք է ապահովել, ապա պետք է յոթ ութ տարի հետոյի համար պլանավորել:

Պարոն Մկրտչյանի կարծիքով ոչ թե ինքը գնահատական է տալիս կոնկրետ ամբիոնի աշխատանքի, այլ պետք է փաստել, որ վատ մարկետինգ ունեն և հաջորդ տարվա համար արդեն, այսօր պետք է լուրջ քայլեր անել: Տիկին Ավետիսյանը համաձայնեց, որ այո՛, կարիք կա լուրջ վերլուծության:

Պարոն Մերոբյանը նշեց, ու ամբիոնի վարիչներին խնդրել էր, որ վերջին հինգ տարվա տվյալներ ներկայացվեյին, ժամկետը լրանում է. խնդրել էր նաև ընդունելության քննությունների պատասխանատու քարտուղար Գ. Ասատրյանին տվյալներ տրամադրել, ապա շարունակեց, որ իրավիճակը շտկելու առումով իրոք լուրջ վերլուծություն է պետք և առաջարկներ պետք է ներկայացնել:

Պարոն Մկրտչյանը նշեց, որ ինքը առաջարկում է մշակել ազդեցիկ մարկետինգի քաղաքականություն:

Տիկին Ավետիսյանն առաջանկեց, որ պարոն Մկրտչյանը և ամբիոնի աշխատակիցները իրենց տնտեսագիտական գիտելիքները ներդնեն հանուն բուհի զարգացման:

Պարոն Հայրապետյանի կարծիքով, այսպես շարունակելու դեպքում բուհը «տուպիկի» է տանելու և գտնում է, որ եթե կտրուկ բաներ չեն ուզում անել, ուրեմն վախենում են, իր կարծիքով ուսման փիլիսոփայությունը պետք է փոխել: Պարոն Հայրապետյանը շարունակեց, որ եթե համալսարանի անվանումը հանեն և տեղադրեն մանկավարժական ինստիտուտ, ոչինչ չի փոխվի և հիմա էլ նույն մանկավարժական ինստիտուտն է, բացարձակապես բան չի փոխվել, իր կարծիքով սա համալսարան չէ, երևի այստեղ շատերը չգիտեն համալսարանն ինչ բան է, իհարկե բոլորին չի վերաբերում, ինչպես կարելի է, որ և՛ բակալավրատում անցնել նույն ծրագիրը, և՛ մագիստրատուրայում, նույն մանկավարժաժողովրդական առարկաները: Մի տեղում ուսուցիչ պետք է պատրաստել, մի տեղում տեսաբան:

Տիկին Ավետիսյանը հակադարձեց, որ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում մասնագրերը իրենց վերջնարդյունքներով բոլորովին կրկնություն չեն:

Պարոն Հայրապետյանն էլ պատասխանեց, որ վերջնարդյունքները մենք ենք սարքում:

Պարոն Սերոբյանի կարծիքով, եթե պարոն Հայրապետյանը նշում է, որ համալսարան չենք. ապա համալսարան դառնալու համար պետք է աշխատեն մասնագիտական ամբիոնները, որոնց տրվել է կրթական ծրագիրը ձևավորելու, կազմելու, ուսումնական պլանը կազմելու, առարկայացանկը ընտրելու, ինչու չէ, նաև յուրաքանչյուր կարդացվող կուրսի որակն ապահովելու խնդիրը: Դա իրագործել է պետք ամբիոններում, ապա հարց ուղղեց, թե արվե՞լ է դա ամբիոններում:

Պարոն Հայրապետյանը նշեց, որ չենք ուզում խանգարել մեր գործընկերների ժամեր հանելով, մի խոսքով առաջին հերթին մեր անձնական շահն ենք պաշտպանում, քան կրթական շահը, դրա համար էլ սա ունենք:
Հաղորդումն կցված է արձանագրությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ «Գիտական տեղեկագրում» խմբագրական խորհրդի փոփոխության մասին

Ա. Սարգսյանի կողմից ներկայացվեց «Գիտական տեղեկագրում» խմբագրական խորհրդի փոփոխությանները, կապված այն հանգամանքի հետ, որ որոշ աշխատակիցներ այլևս չեն աշխատում բուհում և ներկայացվեցին փոփոխությունները:

Պարոն Սերոբյանի կողմից դիտարկում արվեց, որ Սարգիս Պետրոսյանը չնայած այն հանգամանքին, որ բուհում այլևս չի աշխատում, սակայն ի տարբերություն ներկայացված աշխատակիցների, որ երկրում չեն, նա քաղաքում է և իր կարծիքով գուցե մնա խմբագրական խորհրդի կազմում:

Պարոն Սարգսյանը պատասխանեց, որ մյուս բոլոր ածխատողների նման Պարոն Պետրոսյանի նկատմամբ էլ իրնք նույն վերաբերմունք են ցուցաբերել, այսինքն եթե այլևս բուհում չեն աշխատում, ուրեմն խմբագրական խորհրդում այլևս չեն կարող լինել:

Պարոն Սերոբյանը առաջարկեց Ս. Պետրոսյանի անունը հանել ներկայացված ցուցակից, նորից պնդելով, որ դոկտորները կարող են մանկավարժական գործունեություն չծավալել, սակայն գիտական գործունեությամբ զբաղվել և եթե դոկտորները համաձայնեն, կարելի է նույնիսկ կանոնադրության մեկ փոփոխություն կատարել այս տեսանկյունից, որ նրանք բուհում այլևս չաշխատելով, մնան խմբագրական խորհրդի կազմում աշխատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՇՊՀ Գիտական տեղեկագրի խմբագրական խորհրդի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա պրակ.

- Խմբագրական խորհրդից հանել գլխավոր խմբագրի տեղակալ, ֆիզմաթ գիտ. թեկն., դոցենտ Ա. Ֆարմանյանին:
- Խմբագրական խորհրդում ներառված անդամ ֆիզմաթ գիտ. թեկն., դոցենտ Ա. Սարգսյանին ներառել որպես գլխավոր խմբագրի տեղակալ:

Բ պրակ.

- Խմբագրական խորհրդից հանել գլխավոր խմբագրի տեղակալ, ֆիզմաթ գիտ. թեկն., դոցենտ Ա. Ֆարմանյանին, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Ամբարդարյանին,
- Խմբագրական խորհրդում ներառված անդամ ֆիզմաթ գիտ. թեկն., դոցենտ Ա. Սարգսյանին ներառել որպես գլխավոր խմբագրի տեղակալ

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:

8. ԼՍԵՑԻՆ՝

Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի ձևավորման և հաստատման մասին

Պարոն Սերոբյանը առաջարկեց գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի հետևյալ կազմը. Համակարգող՝ Եր. Սերոբյան -
նեկտորի ԺՊ

Խմբի ղեկավար՝ Ն. Ավետիսյան - ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ

Անդամներ՝

- Գ. Նիկողոսյան- պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
- Ա. Ներսիսյան-աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
- Թ. Մելիքյան-հումանիտար գիտությունների և արվեստի ֆակ-ի ղեկան
- Ռ. Մարդոյան-մանկավարժության ֆակուլտետի ղեկան
- Ա. Սարգսյան- գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
- Հ. Մելքոնյան- արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն

Գ. Ավետիսյան- նեկտորի օգնական

Առաջարկվեց նաև ընդգրկել ուսանողների:

ՕՖ. Կուրազյանը առաջարկեց ընդգրկել նաև սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմություն բաժնի մագիստրոս 1-ին կուրսի ուսանող Ա. Աթոյանին և բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Յ. Հովհաննիսյանը ինքնառաջադրվեց:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմը.

Համակարգող՝ Եր. Սերոբյան - ռեկտորի ԺՊ

Խմբի ղեկավար՝ Ն. Ավետիսյան - ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ

Անդամներ՝

Գ. Նիկողոսյան- պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ

Ա. Ներսիսյան-աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Թ. Մելիքյան-հումանիտար գիտությունների և արվեստի ֆակ-ի ղեկան

Ռ. Մարդոյան-մանկավարժության ֆակուլտետի ղեկան

Ա. Սարգսյան- գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,

Հ. Մելքոնյան- արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն

Գ. Ավետիսյան- ռեկտորի օգնական

Ա. Աթոյան- Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

Յ. Հովհաննիսյան - Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

9. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

9.1 Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ յուրաքանչյուր տարի նախարարությունից ստացվում է այն նվազագույն շեմը, որի դեպքում ուսանողին տրվում է վարձավճարի զեղչ, այս տարի սահմանվել է մագիստրատուրայում 50 միավորն է, բակալաբրիատում 40:

ՈՐՈՇԵՑԻՆ

Տեղեկատվությունն ընդունելի գիտություն:

9.2 ՇՊՀ ՊԴ կազմից հոգաբարձուների խորհրդի նոր անդամի ընտրության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ Էվելինա Մաթևոսյանի լիազորությունները դադարեցվել են ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմից, քանի որ նա ընտրվել է գիտական խորհրդի անդամ: Պարոն Սերոբյանը նշեց, որ ըստ կանոնադրության այն պետք է ներկայացվեր ժամկետում, սակայն քանի որ կանոնադրության մեջ չկան անցումային դրույթներ կոնկրետ այս հարցի հետ կապված, ինքը դիմել է հոգաբարձուների խորհրդի նախագահին ներկայացրել խնդիրը, որ հոգաբարձուների նոր անդամի ընտրությունը բուն պրոֆեսորադասախոսական կազմից հին կանոնադրությամբ չեն կարող կատարել, նոր

կանոնադրությունը այս դեպքում կիրառելի չէ, ուսըի խնդրում են կանոնադրության մեջ անցումային դրույթ մտցնել:

- Պարոն Սերոբյանը ներկայացրեց իր կողմից ձևակերպված առաջարկը.
- Գործող կանոնադրության 38-րդ հոդվածը լրամշակել հետևյալ կերպ.

Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում և (կամ) առաջադրվում է նախկին անդամի նշանակման և (կամ) առաջադրման կարգով՝ ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին ռեկտորի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ռեկտորը տեղեկացնում է հիմնադրին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած և (կամ) առաջադրած անձանց կամ մարմիններին, ՇՊՀ-ի մարմիններին:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

- Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակելիս և (կամ) առաջադրելիս, երբ նախկին անդամի նշանակման և (կամ) առաջադրման կարգն ուժը կորցրել է և (կամ) նախկին անդամը նշանակվել և (կամ) առաջադրվել է ըստ սույն դրույթի, ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ՇՊՀ այն ֆակուլտետային խորհուրդները և (կամ) ՇՊՀ քոլեջի մանկավարժական խորհուրդն և (կամ) ավագ դպրոցի մանկավարժական խորհուրդը, որոնք ներկայացված չեն հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու պահին հոգաբարձուների խորհրդի գործող կազմում: Ըստ այդմ ՇՊՀ ֆակուլտետային խորհուրդները ներկայացնում են հոգաբարձուների խորհրդի անդամության երեքական թեկնածու, իսկ ՇՊՀ-ի քոլեջի մանկավարժական խորհուրդը և (կամ) ավագ դպրոցի մանկավարժական խորհուրդը ներկայացնում են հոգաբարձուների խորհրդի անդամության երկուական թեկնածու՝ ՇՊՀ-ի գիտական խորհրդում ընտրությանը մասնակցելու համար:

- ՇՊՀ-ի գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ առանձին քվեաթերթիկով գաղտնի կերպով ընտրում է ՇՊՀ ֆակուլտետներից և (կամ) ՇՊՀ քոլեջից և (կամ) ավագ դպրոցից առաջադրված բոլոր թեկնածուներից մեկին:
- Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքում է առավելագույն ձայներ: Հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի քվեարկություն:

















Տիլին Լ. Մաթևոսյանը նույնպես առաջարկեց հետևյալ դրույթը,

ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղի ընտրությանը մասնակցեն բոլոր ֆակուլտետներից ներկայացուցիչներ:

Պարոն Սերոբյանը առաջարկեց երկու առաջարկներն էլ ներկայացնել Հոգաբարձուների խորհրդի քննարկմանը և դրեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

33 անդամ. կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

1. Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ  Սերոբյան Երվանդ
2. Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ  Ավետիսյան Նազելի
3. ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար  Նիկողոսյան Գագիկ
4. Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն  Մելքոնյան Հովիկ
5. Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն  Սարգսյան Արմենուհի
6. Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն  Խաչատրյան Թերեզա
7. Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)  Պետրոսյան Կարինե
8. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան  Պողոսյան Բագրատ
9. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան  Մելիքյան Թամարա
10. Սոցիալական գիտությունների և իրավունքի  Հովհաննիսյան Օֆելյա
11. Մանկավարժության ֆակուլտետի ղեկան  Մարդոյան Ռուզաննա
12. Ռազմական ամբիոնի պետ  Սկրտչյան Արթուր
13. ՇՊՀ քոլեջի տնօրեն  Այվազյան Կարինե
14. ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն  Դարբինյան Կարեն
15. ՇՊՀ արհմիության նախագահ  Խաչատրյան Վալերի
16. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենաերիտասարդ ղոկտոր)  Սողոյան Սպարտակ

17. Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց ղոկտոր)



Մկոյան Արտաշես

18. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների ղոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր



Սարգսյան Սամվել

19. Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ



Մարտիրոսյան Լևոն

20. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ



Մկրտչյան Արթուր

21. Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ



Ղուկասյան Լուսինե

22. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ

Աղանյան Գևորգ

23. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ

Խորիկյան Հովհաննես

24. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ



Հովհաննիսյան Արտակ

25. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ

Սահակյան Կարինե

26. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. ղոկտոր, պրոֆեսոր




Հովհաննիսյան Անահիտ


27. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր

 Հայրապետյան Սերգո

28. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ

 Կուրազյան Օֆելյա

29. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջնակութային հաղորդակցության և զրուսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ

 Տեր-Աղամյան Շուշան


30. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ

 Մարտոսյան Էվելինա

31. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

 Համբարյան Ժենյա


32. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

 Հովհաննիսյան Յուլյանա


33. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի

— Թադևոսյան Սեդա

34. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

 Վիրաբյան Ալլա

35. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

 Ամիրխանյան Անուշ

36. Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

Քոչարյան Անահիտ



37. Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող

Խաչատրյան Կարեն

38. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող



Աթոյան Արտյոմ

39. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի



Հովհաննիսյան
Հռիփսիմե

40. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի



Սարգսյան Սվետլանա